
**ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋՆՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991 - 2008 ԹԹ.**

ՄԱՐՏԻՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև միջխորհրդարանական հարաբերությունները սկիզբ են առել 1991 թ., երբ ԳԴՀ-ն ճանաչեց ՀՀ-ի անկախությունը: 1992 թ. երկու երկրների միջև միջպետական դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին¹:

Միջխորհրդարանական հարաբերությունների աշխուժացումը, համեմատած համագործակցության մյուս ոլորտների հետ, բարձր է, քանի որ ԳԴՀ-ն խորհրդարանական հանրապետություն է, իսկ երկրի խորհրդարանը՝ Բունդեսթագը, որոշումներ կայացնող բարձրագույն օրենսդիր մարմինն է:

ՀՀ Գերագույն խորհրդի և Գերմանիայի Բունդեսթագի միջև հարաբերությունները սկսվեցին 1991 թ. Հայաստանում անկախության հանրաքվեից հետո, որին մասնակցում էին Բունդեսթագի սոցիալ-դեմոկրատ պատգամավոր Դիտրիխ Շպեռլինգը² և Մարգոտ ֆոն Ռենեսսեն³: Այն հանգամանքը, որ գերմանացի քաղաքական գործիչները դիտորդի կարգավիճակով մասնակցում էին Հայաստանում անցկացվող հանրաքվեին, կարևոր էր այն առումով, որ Արևմուտքի հետ հարաբերություններում հանրաքվեին վերաբերող տեղեկությունները կարող էին օգտագործվել Հայաստանը ճանաչելու և նրա հետ հարաբերությունները խորացնելու համար:

Հայ-գերմանական շփումները փոխայցելությունների ձևաչափով նույնպես երկար սպասեցնել չտվեցին, և արդեն 1991 թ. դեկտեմբերի 1-12-ը «Արևելքի հետ հարաբերություններ»⁴ ընկերության հրավերով ՀՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի պատվիրակությունը հանձնաժողովի նախագահ Դավիթ Վարդանյանի գլխավորությամբ այցելեց Բոնն և Հեսսեն: Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Բունդես-

¹ Տե՛ս Բեռլինում ՀՀ դեսպանության պաշտոնական կայքը, <http://www.botschaft-armenien.de/botschaft/historie.htm>, 12.09.2009 թ.:

² Դ. Շպեռլինգը մինչև քաղաքականությունից հեռանալը (1998 թ.) Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Հարավային Կովկասի տարածաշրջանի պատասխանատուն էր: Եղել է «խորհրդա-գերմանական ընկերակցության» նախագահ, կովկասագետ է: Բազմիցս այցելել է Հայաստան և տարածաշրջան:

³ Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության ՊՂԱ, տեղեկանք հայ-գերմանական խորհրդարանական կապերի վերաբերյալ, գ. 197, ց. 3, էջ 83:

⁴ Հրավիրել էր «Արևելքի հետ հարաբերություններ» ընկերության նախագահ Դիտրիխ Շպեռլինգը:

թագի նախագահի, Հեսսենի Լանդթագի նախագահի և պաշտոնատար այլ անձանց հետ⁵: Հատկանշական է, որ այցը լայն արձագանք գտավ գերմանական մամուլում, և, ինչպես նշում էր «Frankfurter Rundschau»-ն, սա առաջին հայկական ժողովրդավար և լեզվաբանական պատվիրակությունն էր Գերմանիայում⁶:

1992 թ. մարտի 2-ին Հայաստանում էր Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության և Բունդեսթագում նույն խմբակցության նախագահ Հանս Յոհեն Ֆոգելը, որը հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Հանդիպման ընթացքում ընդգծվեց Գերմանիայի հետ փոխշահավետ կապեր հաստատելու կարևորությունը⁷:

Բացի երկկողմ հարաբերություններին առնչվող հարցերից, քննարկվեցին նաև անկախության առաջին տարիներին Հայաստանում հաստատված սոցիալ-տնտեսական ծանր վիճակը հաղթահարելուն ուղղված մի շարք հարցեր:

Արդեն 1992 թ. մայիսի 4-ից 11-ը Բունդեսթագի նախագահ Ռիտա Ջյուսմուտի հրավերով Գերմանիա այցելեց Գերագույն խորհրդի պատգամավորական խումբը՝ Բաբկեն Արարքցյանի գլխավորությամբ: Պատվիրակությունը ունեցավ մի շարք հանդիպումներ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ: Քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող քաղաքական և տնտեսական հարցեր: Այցի ընթացքում պատվիրակությունը այցելեց Բեռլին և Հեսսենի երկրամաս: Հայաստանի ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը և Հեսսենի Լանդթագի նախագահ Կարլ Շթարցախերը համաձայնության եկան Հեսսենի Լանդթագի և Հայաստանի ԳԽ միջև տևական համագործակցություն սկսելու վերաբերյալ⁸:

Հեսսենի Լանդթագի հետ համագործակցությունը շարունակվեց նաև 1994 թ. դեկտեմբերին, երբ Երևան ժամանեց Հեսսենի Լանդթագի պատվիրակությունը՝ Լանդթագի նախագահ Կարլ Շթարցախերի գլխավորությամբ: Պատվիրակությունը այցելեց Ստեփանավան, որտեղ հանդիսավորությամբ բացվեց Հեսսենի անվան փողոց՝ ի նշան աղետի գոտում գերմանացիների ցուցաբերած օգնության: Պետք է նշել, որ Գերմանիայի ավանդը մեծ էր 1988 թ. երկրաշարժի հետևանքների վերացմանն ուղղված օժանդակության և օգնության գործում: 1995 թ. դեկտեմբերի 7-ին Բոննում տեղի ունեցավ 1988 թ. երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշ-երեկո՝ Բունդեսթագի նախագահ Ռիտա Ջյուսմուտի հովանավորությամբ⁹:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստանի խորհրդարանի և Հեսսենի երկրամասի Լանդթագի միջև համագործակցության հետ

⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, տեղեկանք հայ-գերմանական խորհրդարանական կապերի վերաբերյալ, գ. 197, ց. 3, էջ 84:

⁶ Տե՛ս "Frankfurter Rundschau, Armenien hat weiterhin Interesse an Partnerschaft", Parlamentarier Delegation zu Besuch in Hessen / begonnene Projekte werden weitergeführt, 05.12.1991:

⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 3 մարտի 1992 թ.:

⁸ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, տեղեկանք հայ-գերմանական խորհրդարանական կապերի վերաբերյալ, գ. 197, ց. 3, էջ 83:

⁹ Տե՛ս նույն տեղը:

կապված մի շարք հարցեր: Հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունների ամրապնդման և զարգացման շրջանակում հնարավոր համագործակցությունը Գերմանիայի բոլոր 16 երկրամասերի (Լանդերի) Լանդթագների հետ կարող էր շատ արդյունավետ լինել:

Թեև հայ-գերմանական միջխորհրդարանական համագործակցության սկիզբը բարեհաջող էր, բայց հարաբերությունների հաստատման առաջին տարիներին հանդիպումները կրում էին ճանաչողական բնույթ, և գերմանական կողմը հետաքրքրված էր Հայաստանում ժողովրդավարության կայացման գործընթացով և պատրաստակամ էր աջակցելու Հայաստանին: Չնայած հանդիպումների ճանաչողական բնույթին՝ քննարկվում էին Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակին, Հայաստանում մարդու իրավունքներին, երկկողմ հարաբերությունների զարգացմանը և արցախյան հակամարտության խաղաղ կարգավորմանը վերաբերող բազմաթիվ կարևոր խնդիրներ:

Գերմանական խորհրդարանական առաջին ներկայացուցչական պատվիրակությունը՝ Բունդեսթագի փոխնախագահ Հանս Քլայնի գլխավորությամբ, 1996 թ. մարտի 15-ից 19-ը գտնվում էր Հայաստանում: Հանս Քլայնը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահի, Ազգային ժողովի նախագահի, փոխնախագահի, հանձնաժողովների և պատգամավորական խմբակցությունների նախագահների, Սահմանադրական դատարանի նախագահի, ՀՀ վարչապետի և ԱԳ նախարարի հետ¹⁰:

1996 թ. ապրիլի 23-ից մայիսի 7-ը Հեսսենի «Արևելքի երկրների հարաբերություններ» ընկերության հրավերով Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի գլխավորած խորհրդարանական պատվիրակության Գերմանիա կատարած այցի նպատակն էր տեղում մանրամասն ուսումնասիրել տեղական ինքնակառավարման համակարգը: Պատվիրակության անդամները մի շարք հանդիպումներ ունեցան Վիսբադեն, Բադ-Հոմբուրգ, Գիսսեն և Բոնն քաղաքներում¹¹: Այս այցելությունը կարևորում ենք այն առումով, որ նման փորձը կարող էր օգտակար լինել Հայաստանի Հանրապետության համայնքների համար:

Բունդեսթագի հետ համագործակցությունը ընթացել է նաև Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության և դիվանագետների հանդիպումների շրջանակներում:

1995 թ. մարտի 28-ին տեղի ունեցավ Բունդեսթագի նախագահ Ռիտա Ջյուսմուտի և Գերմանիայում ՀՀ դեսպան Ֆելիքս Մամիկոնյանի հանդիպումը: Հետաքրքրական է այն փաստը, որ երբ ՀՀ դեսպանն առաջարկեց երկու խորհրդարանների միջև համագործակցության պայմանագիր ստորագրել, Բունդեսթագի նախագահ Ռիտա Ջյուսմուտը նշեց, որ այդպիսի պրակտիկա Բունդեսթագը չունի, և նման համագործակցություն իրականացվում է համապատասխան հանձնաժողովների և պատգամավորական խմբերի միջոցով¹²:

¹⁰ St'u Zur deutsch-armenischen Zusammenarbeit, Hans Klein, Vizepräsident des Deutschen Bundestages, z.Z Eriwan, Fernseh- und Hörfunkspiegel, 19.03.1996:

¹¹ St'u ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ. 197, ց. 3, էջ 84:

¹² St'u «Տեղեկագիր Գերմանիայում ՀՀ դեսպան Ֆելիքս Մամիկոնյանի և Գերմանիայի Բունդեսթագի նախագահ Ռիտա Ջյուսմուտի հանդիպման մասին», ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, 28. 03. 1995 թ.:

Հայ-գերմանական միջխորհրդարանական համագործակցության զարգացման գործում մեծ դեր ունեն Բունդեսթագի Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական և ՀՀ ԱԺ հայ-գերմանական խորհրդարանական բարեկամական խմբերը¹³:

Փորձենք ներկայացնել Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական խմբի առաքելության և գործունեության հիմնական ուղղությունները Գերմանիայի Բունդեսթագի միջխորհրդարանական խմբերի ընդհանուր իրավասությունների շրջանակում: Ինչպես Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական, այնպես էլ Բունդեսթագի պառլամենտական մյուս խմբերում հիմնականում ներգրավված են այն պատգամավորները, որոնք ունեն քաղաքական, մշակութային հետաքրքրություններ համապատասխան երկրի կամ տարածաշրջանի նկատմամբ: Բոլոր պատգամավորները նախօրոք իրազեկում են իրենց հետաքրքրությունների մասին տվյալ երկրի կամ երկրների վերաբերյալ: Այդ խմբերի պաշտոնական կազմում ներկայացված են Բունդեսթագի գրեթե բոլոր խմբակցությունները: Ինչ իրականացնում և վճռում է խորհրդարանական խումբը, համարվում է ակտուալ քաղաքականություն: Պառլամենտական խմբի պատգամավորների ունեցած ինֆորմացիան օգտագործում են Գերմանիայի բարձրաստիճան պաշտոնյաները, որտեղ նրանք գտնում են իրենց բազում հարցերի պատասխանները: Պառլամենտական յոթնօրյակում մի խումբ տարին մեկ անգամ կարող է այցելել համապատասխան երկիր կամ տարածաշրջան և, հակառակը, պառլամենտական խմբի երկրից պատգամավորները կարող են մեկ անգամ այցելել Գերմանիա¹⁴:

Ուսումնասիրելով խորհրդարանական խմբերի հիմնական գործառնությունները՝ կարևորում ենք գերմանացի պատգամավորների հետ հանդիպումներում քաղաքական կողմին ավելի մեծ նշանակություն տալը, քանզի նրանց զեկույցները և վերաբերմունքը մեծ կշիռ ունեն Եվրոպայում Հայաստանի նկատմամբ քաղաքականության և երկկողմ համագործակցության ընդլայնման համար:

ՀՀ և ԳԴՀ խորհրդարանների համագործակցությանը նոր թափ հաղորդեց Բունդեսթագի՝ 1994-1998 թթ. գումարման՝ Կովկաս միջխորհրդարանական խմբի ստեղծումը, որի շրջանակներում տեղի ունեցան մի շարք պաշտոնական և աշխատանքային այցելություններ: Կովկաս խմբի նախկին նախագահ Վիլլի Վիմերի¹⁵ գլխավորությամբ Հայաստան այցելեց

¹³ Բունդեսթագի Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական խմբի նախկին անվանումը «Կովկաս» էր:

¹⁴ St'u "Internationale Beziehungen des Deutschen Bundestages", Unter Freunden, die Parlamentariergruppen, էջ 33-38, "Deutscher Bundestag", Referat Öffentlichkeitsarbeit, Berlin, 2008:

¹⁵ Վ. Վիմերը մինչև 1998 թվականը եղել է կառավարող կոալիցիայի խորհրդարանական խմբակցության Հարավային Կովկասի պատասխանատուն և Կովկաս խորհրդարանական խմբի նախագահը, այնուհետև՝ Գերմա-

պատվիրակություն (1996 թ. նոյեմբեր, 1997 թ. սեպտեմբեր): Խմբի նախկին փոխնախագահ Շպեռլինզը նույնպես բազմիցս այցելել է Հայաստան (1997 թ. հուլիսին, 1998 թ. փետրվարին, մայիսին)¹⁶:

Հայ-գերմանական միջխորհրդարանական երկկողմ համագործակցությունն էապես ակտիվացավ հատկապես Բունդեսթագի 13-րդ գումարման նստաշրջանի գործունեության ընթացքում (1998 թ.-ից ի վեր): Այդ ժամանակ սոցիալ-դեմոկրատների և կանաչների կոալիցիան, հաղթելով խորհրդարանական ընտրություններում, դարձավ խորհրդարանական մեծամասնություն¹⁷:

Բունդեսթագի և Բունդեսռաթի հիմնադրման 50-ամյակի միջոցառումներին մասնակցում էր նաև հայ խորհրդարանական պատվիրակությունը, որը 1999 թ. սեպտեմբերի 3-7-ը Գերմանիայում էր գտնվում Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանի գլխավորությամբ: Իսկ հոկտեմբերի 10-16-ը Բեռլինում կայացավ միջխորհրդարանական միության 102-րդ համաժողովը, որին մասնակցում էր ՀՀ ԱԺ պատվիրակությունը՝ փոխնախագահ Յուրի Բախշյանի գլխավորությամբ¹⁸:

Գերմանական կողմից Կովկասի տարածաշրջանի նկատմամբ էական ակտիվություն դրսևորվեց հատկապես 2000 թ.: Տարին հատկանշական էր խորհրդարանական պատվիրակությունների այցերի առատությամբ:

Բունդեսթագի արտաքին հարաբերությունների պատվիրակության այցը Հայաստան կայացավ մայիսի 2-5-ը: Պատվիրակությունը Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ մի շարք հանդիպումներ ունեցավ, որոնց ընթացքում քննարկվեցին երկկողմ հարաբերություններին, անդրկովկասյան երեք հանրապետությունների հարաբերություններին, տարածաշրջանում խոշոր պետությունների քաղաքականությանը, անվտանգությանը, տարածաշրջանային հակամարտություններին, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացին վերաբերող հարցեր:

2000 թ. մայիսի 28-30-ը Հայաստանում էր Բունդեսթագի փոխնախագահ Անկե Ֆուքսի գլխավորած պատվիրակությունը: Այս այցը ծրագրված էր դեռևս 1999 թ. հոկտեմբերին՝ խորհրդարանում տեղի ունեցած ահա-

նիա-Հարավային Կովկաս պատգամավորական խմբի փոխնախագահը: Վիմերը գերմանական այն քաղաքական գործիչներից է, որը իր անմիջական դերակատարությունն է ունեցել հայ-գերմանական քաղաքական երկխոսության կայացման ու զարգացման գործում: Նա իր ավանդն է բերել հարավկովկասյան տարածաշրջանի նկատմամբ գերմանական պաշտոնական քաղաքականության մշակմանը, քաղաքական կապերի ամրապնդմանը: Վիմերը բազմիցս հանդես է եկել տարածաշրջանային հակամարտություններին վերաբերող գիտական սեմինարներում:

¹⁶ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների վարչության ընթացիկ արխիվ, հակիրճ տեղեկանք Գերմանիայի Ղաշնային Հանրապետության հետ միջխորհրդարանական հարաբերությունների վերաբերյալ, 22.07.2007 թ:

¹⁷ Տե՛ս նույն տեղը:

¹⁸ Տե՛ս «Հաշվետվություն, Գերմանիայի Ղաշնային Հանրապետություն», ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ. 19, ց. 7, էջ 18, 1999 թ.:

բեկչության զոհերին հարգանքի տուրք մատուցելու նպատակով, սակայն հետաձգվել էր: Իսկ արդեն հուլիսի 16-18-ը Հայաստանում էր Բունդեսթագի տնտեսական համագործակցության և զարգացման հանձնաժողովի պատվիրակությունը: Քանի որ Գերմանիայի Ղաշնային Հանրապետության և Եվրամիության կողմից իրականացվող ծրագրի մոտ 1/3-ը ֆինանսավորում էր ԳԴՀ-ն՝ ուստի այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ Հայաստանում իրականացվող տնտեսական և զարգացման ծրագրերի արդյունավետությանը: Եվ վերջապես, տարին ամփոփվեց Բունդեսթագի բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ Հանս Գեորգ Վագների գլխավորած պատվիրակության ղեկտեմբերյան այցով: Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ պատվիրակությունը, բացի տնտեսական համագործակցության ոլորտի հարցերից, քննարկեց նաև Հայաստանի եվրոպական ինտեգրացիայի քաղաքականության համատեքստում Գերմանիային հատկացված դերին, Անդրկովկասում անվտանգության և կայունության խնդիրներին վերաբերող հարցեր¹⁹:

Խոսելով հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունների մասին՝ անհրաժեշտ է ընդգծել Գերմանիայի դերը երկու առումով՝ Գերմանիան որպես տնտեսապես հզոր, կայացած ժողովրդավար խորհրդարանական երկիր և Գերմանիան որպես Եվրամիության կորիզը կազմող երկիր, որի հետ խորհրդարանների մակարդակով համագործակցության ինտենսիվացումը կարող է դրական արդյունք ունենալ հայ-գերմանական համագործակցության տարբեր ոլորտներում:

1999 թ. հոկտեմբերին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած ողբերգությունից հետո գերմանական կողմին անհրաժեշտ էր ապացուցել, որ Հայաստանում կան համագործակցությունը շարունակելու կայուն երաշխիքներ, որ նոր ստեղծված կառավարությունը պատրաստ է խորացնելու այն ձեռքբերումները, որոնք նոր-նոր սկսել էին արդյունավետ բնույթ կրել: Կար, իհարկե, անվստահության մի մթնոլորտ, որը, սակայն, զգալիորեն մեղմացավ գերմանական պատվիրակությունների այցելությունների ընթացքում հայկական կողմի համոզիչ փաստարկների և պատրաստակամության շնորհիվ:

2000 թ. ընթացքում ՀՀ և Հարավային Կովկաս կատարած այցերը թույլ են տալիս եզրակացնելու Հայաստանի և կովկասյան տարածաշրջանի նկատմամբ Գերմանիայի քաղաքական շրջանակների հետաքրքրության որոշակի աճի մասին: Բունդեսթագի Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական խմբի հրավերով 2001 թ. հունիսի 18-22-ը Գերմանիա մեկնեց ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ, Հայաստան-Գերմանիա խորհրդարանական բարեկամական խմբի նախագահ Գ. Ասլանյանի գլխավորած պատվիրակությունը: Նույն թվականի հունվարին տարածաշրջանային այցի շրջանակներում Հայաստան եկավ Բունդեսթագի Քրիստոնեադեմոկրատական միության / Քրիստոնեա-սոցիալական միության խորհրդարանական խմբակցության փոխնախագահ, ԳԴՀ նախկին պաշտպանության նախարար (1992-1998 թթ.) Ֆ. Ռյուհեն, իսկ օգոստոսին՝

¹⁹ Տե՛ս «Տեղեկանք 2000 թ. ընթացքում հայ-գերմանական փոխհարաբերությունների վերաբերյալ», ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ. 19, ց. 7, էջ 24-25:

Բունդեսթագի ներքին գործերի հանձնաժողովի պատվիրակությունը՝ ԳՂՀ խորհրդարանի փոխնախագահ տիկին Ա. Ֆոլմերի ղեկավարությամբ²⁰:

Բունդեսթագի արտաքին գործերի հանձնաժողովի գրասենյակի ղեկավար Ռ. Չենիկը նշում էր, որ Գերմանիան խիստ շահագրգռված է Հարավային Կովկասում կայունության հաստատման խնդրով: Այցերի նպատակը հարավկովկասյան երեք պետություններում արտաքին և անվտանգության ոլորտներում տեղի ունեցող մտահոգիչ գործընթացներին մոտիկից ծանոթանալն էր²¹:

Ամփոփելով նշենք, որ այցերը, չնայած տարածաշրջանային էին, բայց ունեին քաղաքական կողմնորոշում. այդ է վկայում պատվիրակությունների կազմում քաղաքական ազդեցիկ գործիչների ներկայությունը:

2002 թ. մայիսին Հայաստանում էր Բունդեսթագի՝ Եվրամիության հետ հարաբերությունների հանձնաժողովի պատվիրակությունը՝ հանձնաժողովի նախագահ Պ. Ֆյուգերի գլխավորությամբ, 2003 թ. օգոստոսին Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության պատգամավոր, Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական խմբի փոխնախագահ Յորգ Թաուսը, իսկ արդեն 2004 թ.՝ Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական խումբը՝ Քրիստոֆ Բերգների գլխավորությամբ²²:

2003 թ. սեպտեմբերին «Աջակցություն Հայաստանի Ազգային ժողովին» ծրագրի շրջանակում Ծաղկաձորում տեղի ունեցավ ԵՄ կազմակերպած սեմինար-քննարկում, որին մասնակցում էին նաև Բունդեսթագի մի շարք պատգամավորներ: Քննարկման ընթացքում խոսվեց հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունների մասին: Թեպետ արտաքին քաղաքականությունն իրականացնում է Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը, սակայն մեծ նշանակություն ունեն նաև Բունդեսթագի միջխորհրդարանական խմբերը: Կարևորելով Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական խմբի նշանակությունը՝ պրոֆ. Էգոն Յուեթերը վկայակոչում էր, որ խորհրդարանական խմբի նպատակներից է հայ-գերմանական շփումների ակտիվացումը, ինչպես նաև հարավկովկասյան երկրների դիվանագետների հետ կապերի պահպանումը, գերմանական հասարակական կազմակերպությունների ներգրավումը Հարավային Կովկասի երկրների զարգացման գործում²³:

Իհարկե, նման միջոցառումների անցկացումը ավելի էր խորացնում երկու երկրների հարաբերությունները, ինչն էլ նոր հնարավորություն էր տալիս գերմանական փորձը փոխանցելու հայ գործընկերներին:

²⁰ Տե՛ս ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների վարչության ընթացիկ արխիվ, հայ-գերմանական միջխորհրդարանական համագործակցություն, 2005 թ.:

²¹ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, գ. 16, ց. 6, էջ 18:

²² Տե՛ս ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների վարչության ընթացիկ արխիվ, հայ-գերմանական միջխորհրդարանական համագործակցություն, 2005 թ.:

²³ Տե՛ս Armenian Parliament, role significance challenges, Seminar Proceedings, Opportunities for deeper cooperation between the Parliaments of Armenia and Germany, Prof. Dr. Egon Juetner, September 2003, էջ15-16:

Քրիստոֆ Բերգները, որը գլխավորում էր Գերմանիա-Հարավային Կովկաս պատգամավորական խումբը, 2004 թ. օգոստոսի 13-14-ը իր գլխավորած պատվիրակության հետ գտնվում էր Հայաստանում, որտեղ քննարկվեցին երկկողմ մի շարք հարցեր, և տեղի ունեցան հանդիպումներ Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ²⁴: Բերգները հանդիպումների ընթացքում շեշտեց, որ տարածաշրջանի երեք երկրների զարգացումը միայն խաղաղ գոյակցությամբ է հնարավոր:

Միջխորհրդարանական պատվիրակությունը Հայաստանում էր նաև 2007 թ. հոկտեմբերի 17-20-ը: Այն գլխավորում էր սոցիալ-դեմոկրատ Ստեֆան Ռայխեն: Նա գոհունակություն էր հայտնել հանդիպումների համար և պատրաստակամ էր շարունակելու համագործակցությունը²⁵:

Հայ-գերմանական պատգամավորական բարեկամական խումբը Գերմանիայում էր գտնվում 2008 թ. նոյեմբերի 10-14-ը: Այցի ընթացքում մի շարք հանդիպումներ ունեցան Բունդեսթագի և Բունդեսռաթի պաշտոնատարների, Լեփսիուսի արխիվի հինադիր, տնօրեն Հերման Գոլցի հետ, ինչպես նաև այցելեցին գերմանական մի շարք հիմնադրամներ²⁶:

Հայ-գերմանական միջխորհրդարանական համագործակցությունն ուսումնասիրելիս փորձել ենք անդրադառնալ Բունդեսթագում Հայաստանին վերաբերող խորհրդարանական քննարկումների ժամանակ կառավարությանն արված հարցումներին և ընդունված որոշումներին ու բանաձևերին: Ուսումնասիրության ընթացքում պարզեցինք, որ ընդունված փաստաթղթերի մեծամասնությունը առնչվում է ընդհանրապես Հարավային Կովկասին: Ուշագրավ է Բունդեսթագի 14-րդ գումարման մի խումբ պատգամավորների և ՔՂՄ/ՔՍՄ խորհրդարանական խմբակցության բանաձևը հարավկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ռազմավարական նշանակության վերաբերյալ²⁷: Բանաձևում կարևորվում է տարածաշրջանի՝ էներգակիրներ ունենալու հանգամանքը, շեշտադրվում է Հայաստանի ստարտեգիական նշանակությունը՝ որպես Ռուսաստան – Հայաստան – Իրան աշխարհաքաղաքական ուղղահայաց գծի կարևոր մաս: Համագործակցության ընդլայնման համար նշվում է կոնֆլիկտների, մասնավորապես ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, քանի որ գերմանական կողմը շատ է կարևորում խնդրի կարգավորումը կայուն եվրոպայի համար:

²⁴ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքը՝ www.parliament.am, 13.05.2004 թ.:

²⁵ Տե՛ս ՀՀ ԱԺ պաշտոնական կայքը՝ www.parliament.am, 18.10.2007 թ.:

²⁶ Տե՛ս Միջխորհրդարանական համագործակցություն, ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների վարչություն, 23.02.2010 թ.:

²⁷ Տե՛ս Antrag der Abgeordneten Volker Rühle, Karl Lamers, Klaus-Jürgen Hedrich, Christian Schmidt (Fürth), Hermann Gröhe, Ruprecht Polenz, Hans-Peter Reppik, Dr. Andreas Schockenhoff, Reinhard Freiherr von Schorlemer, Peter Weiß (Emmendingen) und der Fraktion der CDU/CSU Die strategische Bedeutung der Kaukasus-Republiken Armenien, Aserbaidschan und Georgien politisch umsetzen, Deutscher Bundestag, 14. Wahlperiode, Drucksache 14/5961, 08. 05. 2001:

Տարածաշրջանում կայունություն և խաղաղություն հաստատելու համար Բունդեսթագում իրականացվել են մի շարք քննարկումներ և ընդունվել որոշումներ, որոնցից են «Աջակցություն Հարավային Կովկասում խաղաղության և կայունացման համար» վերնագրով մի խումբ պատգամավորների և Die Linke խմբակցության հարցման՝ դաշնային կառավարության պատասխանը²⁸: Այն հարցին, թե ինչպես են գնահատվում հայ-գերմանական երկկողմ ներկայիս հարաբերությունները, դաշնային կառավարությունը պատասխանել է, որ դրանք սերտ են և լավ մակարդակում են՝ փաստելով քաղաքական երկխոսության դրական առաջընթացը և այն, որ Գերմանիան զարգացման համագործակցության առումով Հայաստանի երկրորդ դոնոր երկիրն է ԱՄՆ-ից հետո²⁹: Նմանօրինակ հարցադրումների պատասխանները քաղաքական խմբակցությունները կօգտագործեն տարածաշրջանին վերաբերող իրենց դիրքորոշումներում, քանի որ այս պատասխանը համարվում է պաշտոնական՝ թեպետ քաղաքական ուժերը շատ հարցերում միակարծիք չեն:

Ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ գերմանական մամուլում ծավալված ակտիվ քննարկումներին հաջորդեց Բունդեսթագի 2005 թ. հունիսի 16-ի որոշումը՝ «Հիշել 1915 թ. հայերի տեղահանությունները և ջարդը. Գերմանիան պետք է իր ավանդը բերի հայ-թուրքական մերձեցման գործում»³⁰: Թեպետ այս որոշման մեջ չօգտագործվեց ցեղասպանություն բառը, այնուամենայնիվ սրանով Գերմանիան ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, նշում 1,5 միլիոն հայերի ջարդերի և տեղահանման մասին:

Ուշագրավ են նաև Հարավային Կովկասում Գերմանիայի գործադրած ջանքերը խաղաղության պահպանման և ժողովրդավարության ամրապնդման տեսանկյունից, որոնք արտացոլվել են մի շարք որոշումների մեջ: 2008 թ. Բունդեսթագը ընդունեց մի որոշում՝ «Խաղաղություն և ժողովրդավարություն Հարավային Կովկասում. Ազատ և արդար ընտրություններ - 2008», որտեղ տրվում են տարածաշրջանում տիրող իրավիճակը և այն քայլերը, որոնք կնպաստեն հարավկովկասյան պետություններում ժողովրդավարության ամրապնդմանը³¹:

²⁸ Sẗu Förderung von Frieden und Stabilität im Südkaukasus, kleine Anfrage der Abgeordneten Dr. Diether Dehm, Dr. Hakki Keskin, Monika Knoche, Paul Schäfer (Köln), Bodo Ramelow, Alexander Ulrich, Wolfgang Gehrcke und der Fraktion DIE LINKE, Deutscher Bundestag, 16. Wahlperiode, Drucksache 16/4949, 02.04.2007:

²⁹ Sẗu Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage der Abgeordneten Dr. Diether Dehm, Dr. Hakki Keskin, Monika Knoche, weiterer Abgeordneter und der Fraktion DIE LINKE. – Drucksache 16/4949 – Förderung von Frieden und Stabilität im Südkaukasus, Deutscher Bundestag Drucksache 16/5221, 16. Wahlperiode 04.05.2007:

³⁰ Sẗu Erinnerung und Gedenken an die Vertreibungen und Massaker an den Armeniern 1915 – Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen, Antrag der Fraktionen SPD, CDU/CSU, BÜNDNIS 90/DIE GRÜNEN und FDP Deutscher Bundestag, Drucksache 15/5689, 15. Wahlperiode, 15.06.2005:

³¹ Sẗu Freiheit und Demokratie im Südkaukasus-Für freie und faire Wahlen 2008, Deutscher Bundestag, Drucksache 16/7864, 16. Wahlperiode 23. 01. 2008:

Մենք կարևորում ենք նաև 2008 թ.-ից Հայաստանի մասնակցությունը Բունդեսթագի միջազգային խորհրդարանական կրթաթոշակ ծրագրին, որին հայտ են ներկայացնում շուրջ 28 պետությունների՝ բարձրագույն կրթությամբ երիտասարդ մասնագետներ, որոնք վեց ամիս աշխատում են Բունդեսթագի որևէ պատգամավորի գրասենյակում, ինչպես նաև ուսանում Բեռլինի երեք հեղինակավոր համալսարաններից մեկում, Գերմանիայի քաղաքական հիմնադրամներում մասնակցում մի շարք սեմինարների և այլ հեղինակավոր միջոցառումների: Այս ծրագիրը մեծ հեղինակություն է վայելում բոլոր մասնակից երկրներում և Գերմանիայում: Սա ևս մի միջոց է մեր երկիրը ծանոթացնելու գերմանացի պատգամավորներին և նրանց գրասենյակների աշխատակիցներին ու Հայաստանով հետաքրքրվող անձանց: 2008 թվականից Հայաստանում գործում է նաև միջազգային խորհրդարանական կրթաթոշակակիրների հայ շրջանավարտների միությունը³²:

Նշանակալի է նաև տարբեր ծրագրերին հայ խորհրդարանականների մասնակցությունը, մասնավորապես 2008 թ. Բեռլինում անցկացված ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովին ՀՀ խորհրդարանական պատվիրակության ներկայությունը: Պատվիրակության կազմում էին Արթուր Աղաբեկյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը և Կարեն Ավագյանը:

Այսպիսով, հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հնարավորություն կա առկա համագործակցությունը խորացնելու, քանի որ գերմանական կողմը պատրաստ է աջակցելու համագործակցությունն ընդլայնող յուրաքանչյուր նախաձեռնության: Մենք կարծում ենք, որ երկու գերատեսչությունների միջև շփումների ակտիվացումը անհրաժեշտություն է, և կարևորում ենք, որ գերմանացի խորհրդարանականների հետ յուրաքանչյուր հանդիպում անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ հայկական կողմը արտահայտի կոնկրետ խնդրի հետ կապված հստակ և համոզիչ դիրքորոշում, քանի որ այդ հանդիպումների արդյունքները օգտագործվում են գերմանական կառավարող շրջանակների կողմից: Բացի միջխորհրդարանական խմբի համատեղ աշխատանքից, կարծում ենք՝ անհրաժեշտություն է Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության և Բունդեսթագի միջև կապերի աշխուժացումը, նոր ծանոթություններ հաստատելը Բունդեսթագի տարբեր պատգամավորների հետ, Հայաստանին վերաբերող տարբեր միջոցառումների նրանց հրավիրելը: Քանի որ Գերմանիայի Բունդեսթագի պատգամավորները բավականին լավ են կազմակերպում ընտրատարածքի հետ կապը, կարծում ենք, որ բարենպաստ կլինի, եթե հայ պատգամավորները Գերմանիա կատարած այցերի ժամանակ ծանոթանան այդ գործընթացին և տեղի պատգամավորների խորհրդարանական գործունեությանը:

Խորհրդարանական համատեքստում մեծ նշանակություն կարող է ունենալ Գերմանիայի խորհրդարանում գործող մարմինների օրինակով

³² Տե՛ս ԳՀԴ խորհրդարանի պաշտոնական կայքը՝ www.bundestag.de/ips, ինչպես նաև՝ միջազգային խորհրդարանական կրթաթոշակակիրների հայաստանյան միության կայքը՝ www.ips.am, 15.04.2009 թ.:

Հայաստանի Ազգային ժողովում այդպիսի խմբեր ձևավորելը՝ օրինակ, գիտական ծառայության, որը Գերմանիայի Բունդեսթագում աջակցում է պատգամավորների և ընդհանրապես պառլամենտի աշխատանքներին՝ ապահովելով տարբեր թեմաների վերաբերյալ գիտական և տեղեկատվական հարուստ նյութեր:

Կարծում ենք, որ հայ-գերմանական միջխորհրդարանական շփումները զարգանում են դրական կողմնորոշմամբ, սակայն անհրաժեշտ է համագործակցությունն ավելի ընդլայնել ու խորացնել, կապեր հաստատել Գերմանիայի տարբեր երկրամասերի Լանդթագների հետ, ինչը կնպաստի Հայաստանում խորհրդարանական ժողովրդավարության ամրապնդմանը և զարգացմանը:

МАРТИН ТОВМАСЯН – *Армяно-германские межпарламентские отношения в 1991–2008 гг.* – Парламентские связи между двумя странами начали налаживаться, как только Армения обрела независимость, и поныне продолжают успешно развиваться. Время показало, что сотрудничество Национального Собрания и Бундестага необходимо углублять. В статье освещаются двусторонние парламентские встречи, проведённые в указанный период, и анализируются посвящённые Армении документы, которые приняты Бундестагом.

MARTIN TOVMASYAN - *Armenian-German inter-parliamentary relations (1991-2008).* - The present paper considers the formation and development of Armenian-German inter-parliamentary relations between 1991 and 2008. Inter-parliamentary relations between the Republic of Armenia and the Federal Republic of Germany were established in the early years of Armenia's independent statehood and have been evolving in a positive vein ever since. In his work, the author underscores the need for furthering and expanding the inter-parliamentary co-operation of the parties. Special emphasis is placed on the bilateral visits of the Armenian and German parliamentarians and the significant decisions and resolutions on Armenia adopted in Budestag, the Lower House of the German Parliament.